1022

Միաշաբթի լուսաբացին
Կանայք գնացին գերեզման այցի,
Ավաղ նրանք շբոթվեցին,
Եվ հուզված սարսափած գոչեցին:

Փրկչի գերեզմանը դատարկ է, դատարկ
Եւ մեր սրտերն են անչափ հուսահատ
Որտեղ փնտրեք քեզ,
Ինչպես գտնենք քեզ,
Ախ Տեր մենք ինչպես կապրենք առանց քեզ

Այս կիրակի լուսաբացին,
Հիսուսն է եկել ամենքին այցի,
Եւ ով իր սիրտը կբացի,
Հարության հույսով այն կլցվի:

Քանզի մեր Տերը հարություն է առել,
Եւ իր հարությամբ մեզ արդարացրել,
Հույսով երկնային լույսով է լցրել,
Երկնքի դուռն է մեզ համար բացել:

Քրիստոս հարեավ ի մեռելոց (2)...
Այո մեր Տերը Հարություն է առել
Եվ իր հարությամբ մեզ արդարացրել
Հույսով երկնային լույսով է լցրել
Երկնքի դուռն է մեզ համար բացել:

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025